

— Թէրագղը նամ Ժամանկ բճա դա:

վարժարանին մէջ որչափ յառաջդիմութիւն
ըլլալը ստուգելու համար պէտք է սպասել
մինչեւ որ կատարուի տարեկան յննութիւնը:

Միւս երեք կէտերը թատերական ներ-
կայացման վերաբերեալ էին: Առնցմէ ա-
ռաջինը բացարձակ կերպով կրնէ թէ՛ աը-
ղաքը երկու ամիսէն աւելի է դասադիրքը
ձգելով թատերախաղ սերտելու զբաղած են,
եւ թէ չարթիւ մէկ երկու անգամ ալ լիա-
տերական կրթութիւն ընելու համար տը-
ղաքը կարճակուն ու մեծ մասը փողոցնե-
րը կը թափառին: — Այս կէտին վերջին մա-
սը բնաւ չապացուցուեցաւ: Իսկ երկու
մասին ալ իրենք պատասխան վարժարանին
Տնօրէնութիւնը դատաւարեաց եւ դատարան
օրագրութիւնները ներկայացուց, որով հաս-
կըցուեցաւ թէ՛ մէկ քանի անգամ միայն ու-
րիշ դասերու տեղ անցնել է թատերախաղի
սերտողութիւնը, եւ ուրիշ օրեր ալ ինչպէս
յայտնեց խորէն սրբազան, չէ թէ դասա-
տեսիւն, այլ դասերու սերտողութեան
ժամանակ թատերախաղի սերտողութիւն ե-
ղեր է: Յանձնաժողովը այս քննութեամբ
տեսաւ որ թատերախաղի սերտողութիւնը
զգալի ֆիւսս մը չէ պատճառաւ ուսման
զասերուն կանոնաւոր շարունակութեանը:
Սակայն կէտը կրնէ թէ՛ զարդոյն ուս-
մանց սրահները, թատերաքաղի փոխուելով
տղաքը քարայրատակ ցուրտ ու խոնաւ օդ-
դանատունը ու բակերը լցուել ու ասով
չափ ալ ցուրտ առնելով հիւանդացի են:
— Սեղանատունը փոխադրեալ տղաքը մի-
այն նախակրթարանի աշակերտները ըլլալը
հասկոյցուեցաւ: Իսկ այս պատճառով հիւան-
դացող մէկ քանի տղաք միայն կրցաւ յա-
նուսէն նշանակել իւթիւնեան էֆէնտին, ո-
րոնց մին ինչպէս ինք անանկալ ընտանեաց
կողմէ յայտնեցին թէ այն ժամանակները եւ
անկէ 'ի վեր բնաւ հիւանդացած չէ: Իւ-
թիւնեան էֆէնտին իր որդին որ իր ան-
ուանած տղոց մէկն էր ի բաց առնելով,
երկու տղու համար միայն ընտանիքը հաս-
տատուեցին թէ հիւանդացի են, եւ Մասիսի
նամակին ցցուցած պատճառով հիւանդացի
են:

Յանձնաժողովը մտածեց թէ ընտանեաց
այս վկայութիւնները թէ եւ կրնային մին-
չեւ աստիճան մը արդարացի Մասիսի նա-
մակին այս մասին յայտնած կարծիքը, բայց
հաստատ ապացոյց մը չէին կրնար համար-
վիլ աղայոց հիւանդութեան պատճառին:
Վերջապէս երրորդ կէտը որ թատերադա-
րան հետ ծիծաղաշարժ երգ ու կատա-
կերգութիւն խառնուած ըլլալը կրնէր, եւ
որուն իւթիւնեան էֆէնտին ժողովոյը ներ-
կայացուցած երգը աւելի կարեւորութիւն
կուտար, քննութեան առնուելով հասկըց-
ուեցաւ թէ այն երգը ոչ թէ վարժարանին
տղաքը երգեր են, այլ Օրթոգիւղէն եկած
դերասանները, որ եւ իրենք բերել էին հե-
տերին, ու զատ զատ անոնցմէ տղայոց ու-
մանց բերանը տարածուել են: Յանձնաժո-
ղովը ցաւալի դատաւարին երգի մը վար-
ժարանի մէջ տրուած ներկայացման միջո-
ցին երգուիլը, թէ եւ տղայոց կողմէն եւ
զած չէր ներկայացումը, թէ եւ գրեթէ այն
իրիկուն: Օրթոգիւղի դերասանաց վարձեալ
կրնար համարուիլ թատերաքաղի, եւ աւե-
լի ցաւալին այն որ եղած ծանուցմանց մէջ
ալ յիշատակուած ըլլալով իրենք Տնօրէնու-
թեան գիտութեամբը պատրաստուած ու
երգուած կը կարծուի, մինչդեռ խորէն սրբ-
ազան յայտնեց թէ՛ ինք եւ ոչ իսկ կար-
դացած է եղեր առաջուց այն երգը: Տա-
րագոյս չըկայ որ եթէ կարդացած ըլլար չի-
պիտի ներքեր որ երգուի:

Ահա Մասիսի նամակին մէջ պարունա-
կեալ չորս կէտերուն վրայ Յանձնաժողովին
քննութեան արդիւնքը: Ասկէ կը հասկըցուի
որ մէկ քանի իրողութիւն բաւական եղեր
են նամակագրին ընդհանուր կերպով պա-
խարակելու համար վարժարանին վիճակը:
Սակայն օրինակը նոր տեսնուած բան մը չէ
Ազգին մէջ որ մէկ երկու իրական կամ ե-
րեւակայեալ անկարգութիւն պատճառ բըռ-
նուելով խիստ ու շատ անգամ յայտնուի
ու անիրաւ յարձակմանց ենթակա ըլլաւ
Ազգ. Վարչութիւն, մատակարարութիւն
եւ Հոգաբարձութիւնը:

Ազատ քննադատութիւնը թէ եւ պա-
տահարար անտեղութիւններ կարենայ ու-
նենալ, այլ ընդհանրաբար իր ազգեցութիւ-
նը փաստակար պէտք չէ համարուի ազգա-
լին գործոց մէջ: Մասիսի նամակը ամէն օր
հրատարակուած յօդուածոց կարգը նորոնը-
նաւ բան մը չէ, եւ որովհետեւ արդէն ժա-
լովըդ ալ մտածած էր որ Տնօրէնութեան
հրատարականին չըկրնար բաւական պատ-

ճառ մը համարուիլ, վասն զի ո՛րք կ'ընթաց
Ազգին վիճակը եթէ իւրաքանչիւր օրագրի
յօդուածի համար ազգային պաշտօնատար
հրատարակուի, մանաւանդ որ Պէշիկիսի
չի մէջ գումարուած ընդհանուր ժողովը
գոհութիւն յայտնած էր Տնօրէնութիւնէն,
բաց առկէ, այն օրն ալ Յանձնաժողովին եր-
կու հանրագրութիւն ներկայացան, մէկը
արդէն Տնօրէնութեան պաշտպան մեծագոյն
մասին կողմէն, միւսը՝ հակառակ կարծուող
կողմէն: Երկուքն ալ խնդրելով որ Տնօրէ-
նութիւնը իւր հրատարականը ետ առնէ, այս
ընդհանուր փափագին առկէ, նկատելով
նաեւ թողին մէջ արժած յուզմունքը որ
մինչեւ անգամ իւթիւնեան էֆէնտին ան-
ձին դէմ հրապարակական թշնամեաց տե-
ղի տուած էր, Յանձնաժողովը աղայոց խո-
րէն սրբազանին ու հրատարականը ետ առ-
նել տուաւ, որով հետեւեալ օրը վարժա-
րանին Տնօրէնութիւնը պիտի շարունակէր
իր պաշտօնը:

Ժողովոյը կը մնայ քորչիլ սոյն քննու-
թեան Տեղեկագրին օրագրաց մէջ հրատա-
րակութիւնը, հրատարակութիւն՝ զոր Յան-
նաժողովը բաւական կը համարի ամէն ան-
արդար պայթկողութիւն բառնալու համար:
40 ապրիլ 1869 Կ. Պոլիս:

Յովնանէ Եպիփանոս Սեփեան.
Գ. Ս. Օրթոգիւղ.
Յովն. Գ. Նորաբնակեալ.

Խառն ժողովոյ որոշմամբ զրկուած է
ի հրատարակութիւն:

44 ապրիլ 1869
Ի Պատրիարքարանի Հայոց (Կիւթ)
Կ. Պոլիս: Ազգ. պարբերական:

Այս տեղեկագիրը բաւական կը բա-
ցատրէ Մաքրու հեան վարժարանի խն-
դիրը: Եղբայր մէկ կողմէն Մասիսի նա-
մակագրին չափ ազնիւութիւնը եւ միւս
կողմէն Գիւթ. խորէն սրբազանին հրա-
ժարական տալու իրաւունքը՝ չունենալը
իրեւան կը հանէ: Ուստի ասոր վրայ մեր
կողմէն խօսիլ աւելորդ կը սեպենք:

Արդ եթէ Մաքրու հեան վարժարա-
նին տեղ զենէք Ազգ. հիւանդանոցը,
Մասիսի տեղ ալ զենէք Երեւանը, ան-
միջապէս ինքզինքնին հիւանդանոցի խնդ-
րոյն առնել պիտի գտնենք:

Մասիս յօդուած մը հրատարակեց
Մաքրու հեան վարժարանի վրայ ու քըն-
նութիւն ուղեց, վարչութիւնին ալ քըն-
նիչ մասնաժողով մը խօսեց, եւ իրաց բա-
տոյք վիճակը ազգին Երեւանացոյց սա տե-
ղեկագրովը:

Երեւանի յօդուած մը հրատարակեց
ազգ. հիւանդանոցի վրայ ու քննութիւն
ուղեց, վարչութիւնին ալ քննիչ մասնա-
ժողով մը խօսեց, եւ իրաց ստորդ վի-
ճակը ազգին Երեւանացոյց առանկ տեղե-
կագրով մը:

Ինչ է այս հակապատկերը:

Կը պատահական վերաբերեալ տեղեկա-
գիրը այս հարցման սա պէտքերէն՝ Կիւթ
Երեւանի յօդուած մը հիւանդանոցի վրայ ու քննութիւն
ուղեց, վարչութիւնին ալ քննիչ մասնա-
ժողով մը խօսեց, եւ իրաց ստորդ վի-
ճակը ազգին Երեւանացոյց առանկ տեղե-
կագրով մը:

Ինչո՞ւ համար Մաքրու հեան վարժա-
րանի տնօրէնութիւնը քննութիւն կու-
ղէ, եւ հիւանդանոցի հրատարակու-
թիւնը չուղէր: — ասոր պատասխանը բա-
նիկ առնէ Մաքրու հեան վարժարանի
տնօրէնութիւնը իր գործերը քննու-
թեան գիտութեան համար՝ ճակատը բաց եւ
արդիւնքը իր յօդուածին ըլլալուն վրա:
Աս հերթի վրայ հիւանդանոցի հազարա-
ձութիւնը ասոր հակառակ էր: Բայց
Մ. Հայկունի որ ըստ Մասիսի տրամա-
բան եւ փաստաբան է՝ ըստ ըստ մեզ չուն-
չարան, թող հրամայէ փաստաբանելով
կամ տրամաբանելով այս հարցման պա-
տասխանել:

Հոս ալ տալ բառի խնդիր մը
կայ, այսինքն՝ Կիւթ ըստ որում հաս-
տատապէս պարտաւորութիւն է կըսէ
Մ. Հայկունի, եւ որովհետեւ խորէն սրբ-
ազան ալ հրատարակեալ տուաւ, ուս-
տի խորէն սրբազան իր պարտաւորու-
թիւնը կատարեց պիտի հետեւ յետէ Մ.
Հայկունի: Ահա Մասիսի քու փաստաբան
եւ տրամաբան կոչած Մ. Հայկունիդ,
այս անգամ ալ քեզ վարչութիւնին եւ սոյն
տեղեկագիրը օտարագործներուն համար
վճար պիտի արձակէ: Ինչպէս որ մեզ հա-
մար ըստ որ, քննութիւն ուղեցեալ բազ-
մամարդ հրատարակէն փախչել է, նոյն

իր քեզ պիտի ըսէ: Վերջապէս ինչ որ մե-
լաւ նոյն քեզ բառ եղաւ. քանզի
խնդիրը մի եւ նոյնն է:

— Հետեւեալ նամակը որ պատուա-
ւոր ազգային մը զրկուած է, անկողմ
նակալութեան ոգւով կը հրատարակենք:
... Խմբագիր:

Ասկէ երկու շաբաթ առաջ Մասիս
ըրազրին մէջ Պէշիկիսի վարժարանին
վրայ նամակ մը հրատարակուած էր ո-
րուն մէջ շատերու ծանօթ ճամբարտու-
թիւններ կային:

Այս նամակին քանի մը պատասխան-
ներ տեսնուեցան: Գործը կարեւորու-
թիւն չունենալուն համար չէինք ուղած
անոնց վրայ հրատարակու մեր կար-
ծիքը յայտնել: Բայց չորեքշաբթի ա-
ւուր Մանգումէյի պատուական լիբը-
թին մէջ գրուած նամակ մը մեր լու-
թեան կապը խզեց, եւ պարտաւորեց
մեզի որ մեր գիտցածները հրատարա-
կաւ ծանուցանենք 'ի սկի ճամբարտու-
թեան:

Յարգի նամակագիր աղան կիրակի
օրուան յանձնաժողովին ըրած քննու-
թեան վրայ խօսելով, ինքնիրեն կը
վճռէ թէ՛ Մասիսի հրատարակութիւն-
ներուն զրապարտութիւններ ըլլալը ա-
պացուցուել է: Վարչութիւնը սխալած
ըլլաւ: Եւ որ այդ յարգի աղան քննիչ
յանձնաժողովին նախագահ չէ կարգելու
վասն զի այն ատեն ինքը մինակ ուրիշ
մարդու գործ չի ձգելով՝ քննութիւնը
կրնար գլուխ հանել, եւ Մասիսի նա-
մակագրին իրենք զրապարտիչ կարգան
հանելով՝ ազգին մէջ արդարութեան
մեծ գործ մը կատարած ըլլալուն պար-
ժանքը ժառանգել: Այս ըսածս պէտք
չէ որ զարմանալի երեւայ: Ինչու որ այս
տեսակ զլլաւ տիր մարդոցմէ ուրիշ
բան չի յուսացուիր, եւ քանի որ լիու-
րուածագծիներ եւ դարձի տղաքը իրմ-
բարգի մը դէմ զրգուելու գործը իրենց
նուաստութիւն չեն համարիր, հարկաւ
եթէ ձեռքերուն գալ ուրիշ բռնու-
թիւններ ալ կրնան: Բայց լիբըրալ ա-
ստնք եւ հարցընենք յարգի նամակագ-
րին թէ որո՞նք են զրապարտութիւն
ըսածները:

Զրապարտութիւն է Տեղեկութեան Պ.
Առաքելին դարձողին մէջ տղաքը ձե-
ծելը, եւ ասիկայ ալ բաւական չի սե-
պելով տղաքը եկեղեցիներէն տանել
եւ ֆալսախոսով գանակոծել, եւ այս
պատճառաւ չէ՞ որ տղայ մը քիչ ատենէն
հիւանդանալով մեռնելուն համար հայ-
ընտանիքներուն բողբոջած է:

Զրապարտութիւն է աշակերտաց յա-
ճախ դասադիրքը եւ դասատու փոխած
ըլլալը:

Զրապարտութիւն է ըսել որ տղոյ մէկ
մասը երկու ամիսէ ի վեր թատերախաղ
սերտելու զբաղելով, դարձողին ուսման
մէջ մեծ սրահը թատերաքաղի փոխուել
են, եւ մանր տղաքը սեղանատունը
գրուելով ցուրտին եւ խոնաւութեան
պատճառաւ մէկերէն հիւանդացողներ
եղած են:

Զրապարտութիւն է դարձողին մէջ
ընտանիքներու եւ տղոց առջեւ Ալքա-
ղարի երգարանին հանուած անպար-
կեշտ երգեր երգուիլը, ինչպէս է հե-
շուի, երգը, որ տնօրէնութեան կնի-
քովը իրկուած հրաւիրանաց նամակնե-
րուն մէջ ալ ծանուցուած էր իրենք ծի-
ճաղաչարժ երգ:

Զրապարտութիւն է գեր. խորէն ե-
պիսկոպոսին անունը իրենք թատերա-
կան քերթող ծանուցումներու միջոցաւ
սրճարաններու պատերու վրայ եւ նա-
ւաւատոյցները փակուելը, որ եպիս-
կոպոսի մը եկեղեցական բարձր կարգին
եւ աստիճանին չի վայելը:

Կը հարցընենք հիմա յարգի նամա-
կագրին թէ՛ աստնք ստոյգ եւ շատերուն
ծանօթ ըլլալէ ետեւ, ինքը ի՞նչպէս կը

համարձակի ըսելու որ Մասիսի հրա-
տարակածները զրապարտութիւն են:
Ի՞նչպէս կրնայ զրապարտութիւն են ը-
սել այնպիսի երեւութիւններու որոնց
չափը տնօրէնութիւնը չէ կրցած ուրա-
նայ յանձնաժողովին առջեւ: Ինչպէս
են տղոյ խոնաւ տեղեր լցուելով մէկ
քանիին հիւանդանալը որուն համար
երկու տղոյ բնտանիք գրով վիայած են,
գանակոծութիւններ, անպարկեշտ եր-
գեր երգուելը են: Եւ մնացած-
ներն ալ, ինչպէս է տղոց ուսմանքի
մէջ ետ մնալը, որուն ալ սխալը ա-
պացուցուելու համար անպաւա հար-
ցաքննութիւն մը պէտք կը ըլլայ: Տնօ-
րէնութեան Գաղափարները այս բաները
ժառկելու համար մեծ փառքը ըրած են
եւ մինչեւ անգամ տղաքը իրատեղ են
որ յանձնաժողովին ներկայանալով, ը-
սեն թէ թատերական ներկայացումնե-
րու պատճառաւ իրենց դասերէն ետ
մնացած չեն: Բայց տղոյմէ մէկը յան-
ձնը շառնելով սուտ զուրկել, նոյն օրը
դարձողին դուրս հանուել է:

Ուրիշ շատ մեծ անպատեհութիւն-
ներ ու կան, որոնք Մասիսի նամակա-
ղիրը չէ յիշած, կամ չի գիտնալով կամ
բանաւոր պատճառներու համար լու-
թիւն պահելով, ասոնց ամենէն փոքրն է
մեծ պահոյ օրով ներկայացմանց իրի-
կունները դարձողին մէջ քեպապներ
դառնալը օղիներով եւ գինիներով
ուտիքի խնդոցներ տրուելը:

Այս բաները հրատարակել չէինք
ուզել թէ որ Մանգումէյի նամակագիր
յարգի աղան ճամբարտութեան դէմ մա-
քառելով եւ Վարչութեան յանձնաժո-
ղովին քննութեան արդիւնքին չապա-
սելով հարկադրել մեզ որ մենք ալ մեր
գիտցած ու իմացածները հրատարակե-
լով, իր առանց իրաւունքի կողմնակ-
ցութիւնը նշանակենք:

Խնդրելով, ... Խմբագիր որ սոյն
նամակս ձեր պատուական լիբըթին մէջ
զետեղելու համար:

Մնամ եւ այն
Պէշիկիսի-թաւ 44 ապրիլ 1869

Թ. Եպիփանոս

— Պու. կիւն Երզնկայի մեծերէթ-
պիսի հալապարի պարտ օրու, Երզնկայի
տեղիքին միւսապարտ խառնք խառնք,
պու. կիւնտին միւթեղքերէն պիտի
պէտան խառնք զի, Երզնկայի վիճակի
վիճակի խառնք բայց հաղթել իր Մու-
շա աղիւթի իմ մէջ, հաղթել
կեօրմէյ պաշտաւը տղ:

— Միլիթի իմ գոտին օրան, վի Գալա-
խառնքի պիտի խառնք խառնք արտը
թաղիպ գալ խառնք պուլունան իզ-
գէթու Աստու պէտին, տեղեկար օրան
խառնք հաղթել մեզի, իւ հաղթել մի-
րալայի իմ վիճակի իմ վիճակի պաշտա-
տուղու, ձեր խառնք ասկէ ինչին 274ին
ձի նիւ սիւն սիւն միւ մէջ խառնք օգու-
մուշ տու:

— Հետեւեալ նամակը Մաքրու հեան
աշակերտաց կողմէն Գեր. խորէն սրբա-
զանին ուղղուած ըլլալով՝ ինչպէս ա-
շակերտաց համակրութեանը ամբողջա-
պէս կը հրատարակենք:

Գերազանդել Սրբազան Հայր:

Անկարելի է բնծ նկարագրել մեր
աշակերտաց այս օրուան զգացած ցաւը
եւ տրամութիւնը, տեսնելով մեր ամե-
նասիրելի հօր բաժանումը իւր գորովա-
լից որդոցմէն, ո՞հ, կարծես թէ Ձեր
Սրբազանութեան սկըր մեր սրտերէն յոր-
դուելով հեղեկալ կուտար մեզ որով եւ
արտատուք հեղեղի պէս մեր աչքերէն
կը հոսէին կանխէինք այն Վասակները
որ յանդգնեցան Ձեր վիճանէն սիրող
վշտացնել, կատկենք այն չարքը որ
մեր յառաջդիմութեան ժողելը կը-
լան եւ իրենց հրատարակ նախանձը զո-
վացնելու համար մեր բարոյական կե-
նաց զեռարոյս ծաղիկը թուածնել

1